



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան	100 ղ:
Վեցամսեայ „	55 „
Գաւառաց համար Տարեկան	110 „
Վեցամսեայ „	60 „
Մեծ քիւր	2 ղ:
Մտնուցմանց տուրը մէկ անգամի համար	3 ղ:
Երկու անգամի համար	2 ղ:

Իւրաքանչեւ լրագրաց համար ծախքը խնայարարական վրայ է:

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ օր եւ իցե գրութիւն Լրագրոյս Տնօրէնին պիտի ուղղուի. եւ համար ծախքն ալ քրկողիք վրայ է:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 19 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ընդհանր մարտ ամսոյ մէջ Վերիտի խնդրոյն վրայ եւրոպական տէրութեանց դեսպաններուն առ Ռ. Ղու. ուրն ուղղած առաջարկութեանց եւ փոխարէն տրուած պատասխաններուն պաշտօնական պատմութիւնը հիմա աչքերնուս առջեւն է. Եւրոպական տէրութեանց քով գտնուած օսմանեան դեսպանաց ապրիլ 4 եւ յունիս 20 թիւերով խարժ. Գուստ փաշային կողմանէ գրուած երկու ծանուցագրերը լրագրաց մէջ հրատարակեցան. Եւս կարեւոր դրուածոց երկայնութիւնը չնքնի մեղ ամբողջ թարգմանել. ուստի կը փութանք անոնց էաւան կէտերն ընթերցողաց առջեւ դրնել:

Վերիտի յեղափոխութեան երկաւրիւ պատճառ տուած էր հինգ մեծ տէրութեանց՝ Բւարիոյ, Ռուսիոյ, Վալիոյ, Իտալիոյ եւ Ռուսիոյ իրենց Վ. Պոլսոյ դեսպաններուն մաս յիս 27 թիւով նոյնանիշ ծանուցագիր մ'ուղղելու, ուր կրէին թէ Ռ. Ղու. ուր բոլորովին կը սխալէր եթէ կեն թաղերն որ իրեն մինչեւ այն ատեն գործածած միջոցները կրնային տէրութեանց բաղձնացած նպատակին հասնիլ, այն է կղզին խաղաղել. թէ ըստ իրենց՝ ժամանակն եկած էր չարեաց սկիզբն ու դարմանը վնասելու, եւ թէ եթէ Վերիտի ժողովրդոց կարծիքն ազատօրէն եւ անկեղծօրէն հարցուէր, կրնային չարքն ու դարմանը ցուցնել: Իսկ Ռարձր. Գուստ փաշան չմտնէր Վերիտիներուն բաղձնաքը լրացնել արդարութեան եւ վերահսկողական իրաւանց սահմաններուն մէջ. սակայն չկրնար անպատեհ ընտելութիւններ ընդունիլ կամ ժողովրդեան կամը հարցնել մինչեւ որ պատասխանութիւնը զէնքը վար չգնէ, ապաւանդութիւն մը որոյ կեդրոնը Հունաստանն է:

Դորին Ռարձրութիւնն ապրիլ 4ի ծանուցագրին մէջ կը ցաւի քանի մը տէրութեանց արամադրութիւններուն վրայ՝ որք Ռ. Գրան ունեցած «տըխուր նախագագութիւնները կը կատարէին». սակայն չէր յուսացուէր, կըսէ, որ մինչեւ իսկ Տաճկաստանի ամբողջութիւնը պահպանելու սկզբունքն ալ, զոր իբրեւ եւրոպական հաւասարակշռութեան անհրաժեշտ պայման մը ճանչած են, իրենց ձեռք աւելին, Հետոյ կսկսի պատմել թէ մարտի 28ին հինգ շարքի օրը Վալիոյ դեսպան Վ. Պոլսէ իր քովը գացեր եւ ըսեր թէ ամենքն ալ կը բաղձնէր որ Տաճկաստան իր մտաւանդութիւններէն ազատի, թէ Վերիտէն հաս բերւած երեսփոխանները քաղաքներէն միայն ընտրուած ըլլալով որք կառավարութեան ազդեցութեան ներքեւն են, Վալիոյ քանի մը տէրութեանց հետ համաձայնութեամբ չկրնար զա-

նոնք բոլոր կղզոյն օրինաւոր ներկայութիւններն համարել, եւ թէ պէտք է որ կղզոյն ամեն կողմերը թշնամութիւնները դադարեցնելով՝ նոր ընտրութիւններ ըլլան հիւպատոսաց հրաւիրութեան ներքեւ:

Գուստ փաշան պատասխանէր թէ Վերիտի կառավարութեան համար Վերիտի ապստամբութիւնը չատնց վերջացած է. կը մնայ միայն օտար բաղձնաքները կղզիէն դուրս հանել: Ի. Ղու. փութացած էր հընազանդող ժողովրդոց ներքեւ հրատարակել, եւ կղզոյն ամեն կարգի բնակչաց բարօրութեան միջոցները խորհելու համար՝ հրովարտակ հանած էր որ ամեն դաւաճներ երկու կամ երեք քրիստոնեայ եւ մահմետական երեսփոխաններ ընտրեն, որպէս զի կղզոյն կառավարութեան եղանակին եւ տեղական պիտոյից վրայ խորհելու համար կազմուած յատուկ մասնաժողովի մ'առնել իրենց կարծիքը յայտնեն. Սակայն Ռ. Ղու. չէր կրնար ընդհանուր քուէարկութեան սկզբունքն ընդունիլ կամ սահմանադիր ժողով մը գումարել, քանզի երբեք միտքէն անցուցած չէ Վերիտի վարչութեան վերաբերեալ օրէնքները դնելու իրաւունքէն հրաժարիլ. Ժողովրդեան երջանկութեանն ու բարօրութեանը վերաբերեալ միջոցներ տնօրինել մի միայն իրեն կը պատկանի. իսկ երեսփոխաններ ընտրել տալուն նպատակն անոնցմէ տեղեկութիւն միայն առնուլ էր: Ուստի տէրութեանց առաջարկած ընդհանուր քուէարկութիւնն իրենց ուղածէն տարբեր հետեւութիւն ունենալիքը ծանուցանելով՝ Ռարձր. Գուստ փաշան կը հարցնէ Վ. Պոլսէի թէ ի՞նչ էր տէրութեանց բուն նպատակը:

Վ. Պոլսէ կը պատասխանէ թէ Վալիոյն կայսեր կառավարութեան նպատակն էր Վերիտի ժողովրդեան ստոյգ բաղձնաքը հասկնալ, թէ արդեօք Վամսի Սոլո-Սոլոյի ալաքի կամ Սերվիոյ պէս իշխանութիւն մը կուղէին, կամ թէ Հունաստանի հետ միանալ: Եւրոպա ժողովրդական քուէարկութեան օրինակը տեսած էր Վ. ինտրիկի մէջ, որ Վալիոյ ծանր բեռ մ'եղած էր, եւ այս միջոցը կըրնար Ռ. Գրան պատիւը պահելով թէ՛ Վերիտի եւ թէ՛ ուրիշ դժուարութիւնները լուծել:

Բարձր. Գուստ փաշան այս կարծիքը կը հերքէ ըսելով թէ ժողովրդական քուէարկութեան իրաւունքն (օսմանեան կայսրութեան օրինական սկզբանց մէջ ընդունուած չէ, ուստի Ռ. Ղու. չկրնար իր իրաւունքէն հրաժարիլ, կամ գործադրել այն աւան բաները՝ զորս նոյն իսկ Վ. Պոլսոյ մէջ ալ ուղղուներ կրնան դադարել, Եւ զարմանք կը յայտնէ որ Տաճկաստանի ամբողջութիւնը պաշտպանող տէրութիւններն այնպիսի սկզբունք մը կառավարեն, որ սատիճանաւոր

կերպիւ կայսրութիւնը բոլորովին ջրնջելու կը մտնի: Վերիտ ոչ Վամսի ոչ ալ Վանուբեան իշխանութեանց կրնայ նմանիլ, քանզի 200,000 քրիստոնեայ բնակչոց քով 120,000 ալ տաճիկ բնակիչ ունի, որք երկրին կէսէն աւելին տէրն են: Կայսերական կառավարութիւնը քրիստոնեայ կատարեալ հաւասարութիւն կուտայ, բայց չկրնար մահմետական տարրը դուրս հանել: Իսկ Վերիտը Հունաստանի տալու նկատմամբ յայտարարութիւն կրնէ թէ ասիկա ընել տալու համար նոր Վալիարին մը պէտք է:

Վ. Պոլսէ ուշադրութեամբ այս խօսքերը մտիկ ընելէ ետեւ, «զորս չկրնայ կրսէ Ռարձր. Գուստ փաշան առանց սաստիկ տխրութեան զգացման մը խօսիլ», իր առաջարկութեան նպատակին վրայ ապահովութիւններ տուել է թէ տէրութիւններն անկեղծաբար կը բաղձնէ Տաճկաստան իր ներկայ դժուարութիւններէն ազատել:

Վ. Պոլսէի այս խօսակցութեան երկու օր ետքը՝ Բւարիոյ Վալիոյ Ռուսիոյ եւ Ռուսիոյ դեսպաններն ալ զատ զատ Ռ. Ղու. ուր կերթան եւ մի եւ նոյն առաջարկութիւնն ընելով մի եւ նոյն պատասխանները կառնուն:

Սոր վրայ հինգ մեծ տէրութիւնները Ռ. Գրան երկրորդ նոյնանիշ ծանուցագիր մը կը զրկեն, որուն Ռարձր. Գուստ փաշան կը պատասխանէ յունիս 26ի ծանուցագրով: Տէրութիւններն զմեզ կը մեղադրեն, կըսէ, որպէս թէ իրենց խորհուրդներուն համար նպատակը լու չենք հասկըցեր, եւ հաւանականութեանց ասպարեղին մէջ նետուելով բուն խնդրէն հեռացեր ենք: Ի. Ղու. իր նկատմամբ եղած բարեկամական ըզգացումները կը ճանչէ. սակայն կառավարութեան մ'առաջին եւ կարեւորագոյն պարտքն է իրեն պահպանութեանը վրայ հսկել եւ իր էութեան սկզբունքն մահացու հարուածներ տուող զէնքերէն զուլանալ: Եւս այս պարտոց հնազանդելու համար հինգ մեծ տէրութեանց առաջարկութեան վրայ այն դիտողութիւններն ըրած է որք կը պարունակեն ապրիլ 4ի ծանուցագրին մէջ:

Սեղի դարձեալ կառավարիչի, կըսէ, Վերիտի բնակչաց կամը հարցնել թէ՛ պատահած ցաւալի եղելութեանց եւ թէ՛ անոնց վախճան մը տալու միջոցներուն վրայ. սակայն Ռ. Ղու. արդէն բնակչաց բաղձնաքն հարցուցած է իր իրաւանց սահմաններուն մէջ եւ պարտաստ է անոնց օրինաւոր պիտոյքը լրացնելու:

Բայց այս է իրօք այն նպատակը որուն համիլ կուղուի. չի տեսնուիր դժբաղդարար մեքձակայ երկիր մը Հունաստան, որ Տաճկաստանի հետ արտաքուստ հաշտ ըլլալով, ի ներքուստ կը ջանայ միշտ իր փառասիր-

ութիւնը գոհ ընել ի մնաւ անոր, Իրաց վիճակը քննուելով երկու բան կը դառնուի, նախ Հունաստանի մեքձակայութիւններն ու Վերիտ կամաւորները զրկելը, եւ երկրորդ Վերիտի ժողովրդոց փախալը, որ է ապրստամբութեանն առաջ ուղղածն համաւոր կղզոյն կառավարութիւնը բարեկարգել տալով խաղաղութեամբ ապրել, Ի. Ղու. չկրնար ժողովրդոց կամը հարցնել, բայց պատրաստ է բաղձնաքնին գոհ ընելու, եւ Վալիարին նոր ընտելութիւն մ'ալ ընդունիլ, որոյ ձեւն ու նպատակն ինք պէտք է որոշէ ըստ իւր վիճակաւ պետական իրաւանց. միայն թէ քննութիւնն ազատ եւ անկեղծ ըլլալու համար՝ պէտք է որ նախ օտար յարձակողներն որք երկրին օրէնք դնել կուզեն, որ եւ է կերպիւ դուրս հանւին:

Մտնք են ահա Ռարձր. Գուստ փաշային դրած երկու կարեւոր ծանուցագրերուն խմատները: Մտնցմէ ետեւ մեծամեծ դէպքեր ալ պատահեցան. Պոլսէն Վալիոյ պառաւորեցաւ. ապստամբութիւնն ալ ծանր հարուածներ կրեց. Բայց տէրութեանց համաձայնութիւնը տալու միայն մնացած է, եւ Ռ. Ղու. ալ կայսերական զինուոյքը յարձակութիւններէն ետեւ ասիկ երկու ամիս առաջուրէն աւելի զիջում կրնէ: Մտնք խիստ երկարալի կը թուին մեզ:

Հիւսիսային Վերմանիոյ դաշնակցութիւնը կը տնօրինէր որ ինչպէս ազգային երեսփոխաններէ բաղկացեալ խորհրդարան մը նոյնպէս ալ դաշնակից կառավարութեանց ներկայացուցիչներէն կազմուած խորհուրդ մը պիտի ունենար, Վաշնակցութեան դիւանագետ Վիմարը կոմս օգոստոս 15ին յիշեալ խորհուրդը բացաւ ի Վերլին եւ իր գործը պիտի ըլլայ առաջիկայ խորհրդարանին ներկայացուցիչը առաջարկութիւնները պարտաստել, Եւս առաջարկութեանց կարգին մէջ են հարաւային Վերմանիոյ տէրութիւնները, թղթատարութեանց հիւպատոսարանաց եւ բնակարանի իրաւանց օրէնքները, եւ այլն եւ այլն, խորհրդարանին ընտրութիւններն առաջիկայ ամսոյն մէջ պիտի սկսին:

Բւարիոյ եւ Իտալիոյ մէջ ժամանակէ մ'ի վեր բանակցութեան առաւելալ եղած վաճառականութեան նաւարկութեան եւ թղթատարութեան դաշնակցութիւնները կըքուցան եւ ինչնայի պաշտօնական Վալիէն անոնց բնագրերը հրատարակեց, Եւս դաշնագրութիւնները խիստ ազատամիտ ոգով գրուած են, եւ տէրութեան մեքավաճառ եղած ծրխախտի աղի եւ վառօղի առեւտուրներն ի բաց առեալ, վաճառականութեան բնաւ արդեւ մը չեն դը-

ները՝ որք Հռոմէն Պալիսուն առած չեն՝ օրինաւոր կաթուղիկոս չհամարիր, և միւս կողմէն՝ ինքը Հռոմէն Պալիսուն առած ըլլալուն համար «Մատուցող անմեկնելի կարգադրութեամբ Տանն Հայոց կաթուղիկոս և Ս. Գրիգորի աթոռոյն յաջորդ ըլլալու վիճակն» իւրեն ինկած կը հրատարակէ։

Այսպէս ահա պատմութիւնն այլ լայնը թեկնածու մ'իւրեղնը Ս. Լուսաւորի օրինաւոր յաջորդ կը հռչակէ, և տանուվելի դարերէն ի վեր օրինաւոր յաջորդութեամբ տեւած լուսաւորչական գահուն աստիճանաւորն՝ ասորինաւոր կանուանէ։ Այլ գարնանալի յանդգնութեամբ։

Բայց քննենք և տեսնենք թէ երբ Ս. Գրիգոր լուսաւորիչ կամ մեր Պահլաւուն կաթուղիկոսները Հռոմայ գահէն Պալիսուն խնդրեցին իրրւ ի նշան իրենց առնոյն գահն ունեցած հնազանդութեան։

Լուսաւորիչ Հռոմ երթալուն վաւերական պատմութիւնը Արթուրեան զոս Օգոստին և Խորենացին տուած են, որոց առաջին երկուքն իրեն ժամանակակից և ծանօթ էին։ Երբ այս պատմիչներն՝ որք Ս. Լուսաւորիչն յատկապէս Կեսարիա երթալով Ս. Ղ. Լեւոնիոսէն ձեռնադրութիւն առաւ, ըլլալով պարտաւորեալով պատմած են, չէին պատմեր նաև Հռոմի մէջ Ս. Սեղբեստրոսէն աւելի բարձր ձեռնադրութիւն մ'առնուլը։ Եթէ Լուսաւորիչ Հռոմի գերագահութիւնը ձանձառ և անկէ ձեռնադրութիւն առած ըլլար, իր որդիքն և յաջորդներն ալ չէին նոյնը ընել, և ինչո՞ւ համար պատմութիւնն ասոր օրինակը չտար մեզ։

Ս. Սեղբեստրոսի ժամանակ չկար բնաւ Հռոմայ մէջ այնպիսի իշխանութիւն մը կամ գահ մը՝ զոր յետոյ «պապ» (1) բառն իր մէջ պարունակէր սկսաւ։ Ինչպէս կրնայ ուրեմն Ս. Սեղբեստրոսի միտքէն անգամ անցնիլ քահանայապետական իշխանութիւն տալ Ս. Գրիգոր լուսաւորիչին, զոր՝ ըստ բոլոր հաւատարմիւ և ժամանակակից պատմագրաց՝ իրրւ ամեն կերպով իրեն հաւասար ընդունեց և պատուեց, և անոր պատուասիրութեան ինք ալ քրիստոնէական եղբայրսիրութեամբ պատասխանելով, անոր տարած ընծայեց լուսն փոխարէն ինք ալ ընծայեց տըռուաւ։

(1) Պապ բառն յունական «բարաս» բառէն ելած է, որ հայր կը նշանակէ, և իւրիւս անգամ ևս իսկականութեամբ ալ կը տըռուէր նախնական քրիստոնէութեան ժամանակ՝ երբ ասիական Հռոմայ եպիսկոպոսներն ուրիշներու վրայ գերագահութիւն պահանջելու ելած չէին, Բայց Գրիգոր է. 4076ին Հռոմ Սինոդ մը դռնաբերելով Պապ բառը միայն Հռոմայ եպիսկոպոսներուն յատկացուց, Այն ատենէն սկսան Պապերը գերագահութեան պահանջում ընել։ Պատմութիւնը քրքրած ատենինս կը տեսնենք որ այս պահանջումն ալ բոլորովին քաղաքական պատճառներէ առաջ եկած է, Կոստանդնուպոս կայսերական գահն ի թիւզանք զիսն փոխադրելէ ետեւ՝ Հռոմ պապերուն ձեռքը մնաց, ուր իրենց ազդեցութիւնն երթալով մեծացաւ, Թեոփ կայսրութիւնն երկուքն բաժնուեցաւ, արեւելեան և արեւմտեան, քաղաքական իշխանութեան տկարութիւնը եւ ժամանակին ազդեցութեամբ վերջոյ վրայ հոգեւորական իշխանութեան ունեցած ազդեցութիւնը մեծապէս օգնեցին պապերուն զօրութիւն տալու, Եկաւ Միծն կարողութ, որ մասամբ իւր իշխանութիւնն ամրապնդելու եւ անոր մեծ ոյժ տալով դաշնակից մ'ունենալու քաղաքական նպատակաւ, և մասամբ իւր իշխանութեան ամրապնդելու շարժելով, պապերուն երկիրներ տուաւ, Ժամանակ ժամանակ ուրիշ իշխաններ եւ իշխանուհիներ ալ Հռոմայ Աթոռոյն հողեր թողուցին, Եւ ահա այսպէս հոգեւոր եւ աշխարհական պապութիւնը կանգնեցաւ։

Թերեւս բոլոր մեզ թէ ինչու համար ուրեմն Լուսաւորիչ Հռոմ գնաց։ Ար պատասխանենք թէ Լուսաւորիչ Հռոմ երթալը քաղաքական և կրօնական դեպքերու հետեւութիւն մ'էր։ Տորաւ քրիստոնէութիւնն ընդունած ժամանակ Արեւմտեայ Սեղբեստրոս ալ Աւետարանին լոյսը ձանձեց, Ասկէց աւելի բարեպաշտէ առիթ կրնար ըլլալ Տորաւայ և Լուսաւորիչ նորադարձ քրիստոնէայ ինքնակալ մը հետ բարեկամութիւն հաստատելու և խուժադուժ ազգերէ շրջապատեալ քրիստոնէայ Հայաստանին հզօր դաշնակից մ'առնալու։ Ուստի Տորաւ Հռոմ գնաց և Լուսաւորիչն ալ հետը տարաւ, փասն զի անոր համբաւն սկսած էր քրիստոնէութեան մէջ տարածիլ, և այնպիսի ընկերի մը հետ իր քաղաքական բանակցութեանց յաջողիլն ալ սպասուէր։ Երկու վեհապետը դաշնակցութիւն հաստատեցին իրենց մէջ, բայց նշանակել պէտք է որ ոչ Խորենացին՝ ոչ ալ մեր ուրիշ հաւատարմ պատմիչները, որք այն դաշնադրութիւնը կը յիշեն, Սեղբեստրոսի և Լուսաւորիչի մէջ ալ մասնաւոր դաշնադրութիւն մ'ըլլալու խօսք կընեն։

Բայց երթալովք թէ Կոստանդնուպոս քրիստոնէութիւնը ընդունելու Տորաւ ու Լուսաւորիչ Հռոմ չերթային, Լուսաւորիչ եպիսկոպոսապետութիւն առած չարտիւ ըլլար, և Հայաստանեայց եկեղեցին առանց զինի մնար։ Տարակոյս չկայ որ ասանկ չէր կրնար ըլլալ։ Հայաստանեայց եկեղեցին կազմուած էր, թէ և տոհմաւոր Եւրամագր ժողովարկէր Վաղարշի վրայ բազմիլ՝ փոխանակ Պապին։

Այս է ահա պատմական տրամաբանութեան մեզի ցոյց տուած ճշմարտութիւնը որ զիւրաւ չկրնար ժխտուիլ։ Ուստի վերջին պատմագիրներէն ամենէն ընդարձակախօսը՝ Հ. Միքայէլ Չամչեան՝ չկրնար Ս. Գրիգոր Լուսաւորիչն ի Սեղբեստրոսէն ձեռնադրութեան ըլլալուն առաջընդհին պատմիչներու վիպութեամբ հաստատել, այսպէս կրնէ։ «Սուրբ Սեղբեստրոս՝ ըստ որում աւանդի յազդի մերում՝ ձեռնադրեաց զսուրբ Գրիգոր Պատրիարք Հայոց (1)»։

Հ. Միքայէլ Չամչեան ինք ալ անշուշտ այս աւանդութեան կեղծարարութիւնը գիտաւ, երկայն ծանօթութեան մը մէջ կը ձգնի Ս. Լուսաւորիչն Հռոմ ձեռնադրութիւն ապացուցանել, և ասոր համար խել մը տարտամ վիպութիւններ կը բերէ յետին պատմիչներէ և հեղինակներէ, որք շատ տեղեր ալ հակառակ վիպութիւն տըռուած են։ Բայց քանի որ Լուսաւորիչն ժամանակակից պատմիչները կը լռեն, յետին պատմիչներու երկդիմի խօսքերն արժէք չեն կրնար ունենալ։

Հ. Միքայէլ և ուրիշները «Գաւանջ թուղթ» անունով շինծու գրուածք մ'ալ կը յիշեն։ Բայց յիշեալ գրուածքին ինչ անձնունի և ավելցեցիկ առասպել մ'ըլլալը Հասկեցող չէ մնացած ազգին մէջ, թէ և մեր եկեղեցականներն ալ անմար տպիւրաբար պաշտպանած են զայն իրրւ։ Հայաստանեայց հայրապետական աթոռին անկախութեան նպատակաւ գործ մը։

Իսկ մեր Պահլաւուն կաթուղիկոսներուն դալով, անոնք ալ Հռոմի պապերէն Պալիսուն ինքրած չեն բնաւ, այլ առաջին անգամ Հռոմի Պապը մեր մեծանուն Գրիգոր Գ. Պահլաւուն (2) կաթուղիկոսին հետ թղթակցութիւն բացեցին։ Եւրոպայէն իրաւուն կարգաւորները կրօնական խնդրոյ վրայ հայոց հայրապետին հետ վեճարանելով ափի բերան եւ

զեր, և անոր խնամութեանն ու հմուտութեանը վրայ սքանչանալով և հօգուտն զի զեղիւթ իւնն ու հաւատոյ ճշմարտութիւնը հասկնալով՝ անոր վրայ դուրսաներ գրեր են Կոնստանդնուպոս Բ. Պապին կամ անոր յօդորդին։ Ս. Պապն ալ սիրով ի նամակ մը գրեց և քող ու զաւազան ընծայ զիւրէն և անոր։ Հայոց հայրապետն ալ Հռոմի հայրապետին զրկած ընծայեց ընդունելու և փոխադարձ քաղաքակրթութեամբ ինք ալ անոր նամակ և ընծայեց զերկերէն։ Եւ ահա ասկէց սկսած է մեր Վիլիլիոյ կաթուղիկոսներուն Հռոմի հայրապետոյ հետ թղթակցութիւններն ու մէկ մէկու ընծայեց զիւրէն, ընծայեց, որք հարկաւ աշխարհային նիւթեր չէին կրնար ըլլալ, այլ կեղեցական և հոգեւոր այն է մատուցը, հայրապետական զաւազան, թագ, մատանի և այլն։ Եւ անոյն կրնայ հետեւիլ բանաւորապէս թէ Հայաստանեայց եկեղեցին Հռոմի հոգեւոր խնամութեանն ընդունած ըլլայ, ինչպէս որ կուզեն հաւատոյնը անդալեւնականք։

Բայց կրնան արդեօք ցուցնել թէ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ Պապին անունը դնեն մէկ անգամ յիշատակուած ըլլայ Ս. Լուսաւորիչ օրէն մինչև այսօր։ Եւ յիշատակութիւն մը որ Պապին իրաւասութիւնն ընդունելու առաջին և ետին պայմանն է։ Բանի որ այսպիսի բան մ'եղած չկայ, մեր հայրապետներէն ոմանց Հռոմի Պապին հետ ըրած թղթակցութիւններէն՝ որք լի անձնական յարաբերութիւններ են, կրօնական հպատակութիւն հետեցնելը ծայրագոյն անսեղութիւն մ'է, որուն դէմ Հայոց 1600 ատուական եկեղեցական անընդմէջ անխախտութիւն բարձրաձայն կը բողբէ։

Պապին ժամանակներ, յորում տղաքրութիւնն ու մատենադրութիւնը զըրեթէ միայն հռոմէական կղերիկ ձեռք ըլլալով՝ կրնային հրատարակութիւնն իրենց նպատակին զործածել, պատմութիւնն ու ընդհանուր պէս աղջիկն, նախ ինչո՞ւ մատենադրութիւններն ու ընդհանուր պէս աղջիկ և մեկնել։ Եղբին մէջ այն ատեն տակաւին այսպիսի պայտըութիւններն որոշող խիստ քիչ կը գրուէր, ուստի անդալեւնականք ալ կրցած են ժամանակաւ միախառնել որսալ և իրենց քարոզութիւններն աղբին մէկ փոքր մասին կընցընելով փաստելով։

Ստիպյալ մեզի համար բարեբաղդաւոր և անդալեւնականաց համար ալ դժբաղդաւոր այն օրերն անցան, Եւսոր զպոքոյն մանուկներն անգամ առանց քննելու չեն հաւատար այնպիսի քարոզութեանց և դիւրաւ չեն խորհրդաւորութեան ճշմարտութեան սուտին որոշելու կարող շատ անձինք կը դանդաղէին, և Չամչեանի ու անոր նման պատմագրաց կամաւոր սխալներուն ու առասպելներուն կուրօրէն հաւատացող չկայ։ Ուստի կը ծանուցանենք որ Լուսաւորիչն Հռոմէն ձեռնադրութիւն առած ըլլալուն պէս շինծու պատմութիւններ յորինելու կամ պաշտպանելու ունայն աշխատութիւններով ինքզինքն չյօգնեցնեն այսուհետեւ։

Բաժնեկներն և կը հետեւի նաև թէ որչափ անտղի է Գեր. Սատուէր Չռոմէն առած ձեռնադրութեամբ ինքզինք Ս. Գրիգոր Լուսաւորիչ յաջորդ կարծելը, Գեր. Սատուէր թէ ինքզինք նախադաս անունն է, թէ Վաթուղիկոս և թէ Պատրիարք, պարզապէս Հռոմայ կամակատար մէկ ծառան է։

Իսկ Լուսաւորիչ յաջորդ, երբեք Լուսաւորիչ յաջորդն Հայաստանեայց եկեղեցւոյն և Եղբին կամաւոր և ընդհանուր հաւանութեամբ կրնար լի և հնուց ի վեր անխախտ և անկախ պիտի մնայ, ոչ միայն Հռոմէն, այլ և որ և է հոգեւոր իրաւասութեան

նէ, զոր եկեղեցին և ազգը մինչև այսօր չէ ձանձառ և չձանչեր։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վայսերական հեռագրաց և թղթատարութեանց վերատեսուչ Ալ. Բ. Գ. Վրթման Եֆէնտիկ կայսերական կառավարութեանն հրաման ըստ տանալով՝ քանի մը շաբաթ Եւրոպայ անցունելու համար Վրթմանի վերջին շոգենաւով մայրաքաղաքէն մեկնեցաւ։ Իր պաշտօնն առժամանակեայ կերպով երկրորդ անօրէն Փէյլի պէյին յանձնուեցաւ։

— Եղբիւր թագուհին իր արքունական զերգաստանին անդամներուն լուսնկար պատկերները զիւր Տարձր Եւսուժ Իզդէտիկ Եֆէնտիկին Եւսուժ պատկերները պարունակող տետրակին առաջին թուղթին վրայ թագուհին իր ձեռքովը հետեւեալ տողերը գրած է։ «Եւսուժ Իզդէտիկ Եֆէնտիկ, յիշատակ սիրոյ ի Վրթման թագուհին Եղբիւր»։

— Բ. Գուրու ծանուցագրով մը իմացուց մայրաքաղաքէն դեպքաններուն թէ դատի վերաբերեալ գործերու կարգադրութեան համար Բերայի քաղաքական ատենանիս վերջին ժամանակներս ըրած անօրէնութիւններն առժամանակեայ կերպով կախ մնացած են, և առայժմ նոյն ատենին ընդհանուր ատենադարին ձեռք պիտի կարգադրուին։ Բ. Գուրու որոշած է նաև դատաստանական կազմակերպութեան օրէնք մը շինել, որ միմիայն պէս տար տէրութեանց երեւոյթաններուն պիտի հարկադրուի, որպէս զի իրայ ներկայ վեճակէն յառաջ գալիք զեղծ մանց առաջըն առնուի և արդարեւ թեան ապահով երաշխաւորութեան ներ տըռելն հասարակութեան։

— Արտուի թէ Վաթիկոյ մէջ հեղինակն ստորագրութիւնն բացել են նոր Եւրոպայի մը գնելու համար և արդէն 6000 լիւրա ժողկեր են։

— Լեվրթ-Շերրա կը ծանուցանէ թէ Եւրոպայի ջնջուելէն ետեւ Եւսուժ անուն հեղինակն ծովագաւտան ուղևորութիւն մ'ըրբէ է ի Վիւրիւ։

— Հունգարական կառավարութեան 9000 ասեղաւոր հրացան գըրաւեր է որք Պէլէն Պաշքէշ զըրկուած են եղեր։

— Ուսուժուգէն կը գրեն թէ աւերտրական Ալեքսանդր շոգենաւոր Վաթիկէն հասած ատեն, իմացուելով որ հաշակաւոր Սֆէթքո անուն պուլկար աւազակապետն իր ընկերներէն մէկուն հետ յիշեալ շոգենաւին մէջ կը գրուէր և Պուլկարստան երկը կուզէ, աստիկանութեան զինուոր մը և Եւսուժիոյ հիւպատոսարանէն մարդ մը շոգենաւոր զրկուեցան, որպէս զի աւազակապետին հոն դանուելն ստուգեն։ Եւրոպայի Սֆէթքոյն անցալիւր կուզեն տեսնել, անկիւս ատրճանակի հարուածով մը կը պատասխանէ որ բարեբաղդաւոր մէկուն քիսա չտար։ Եսոր վրայ ճանապարհորդը զարհուրանօք դուրս կընեն և նուազ մէջ Սֆէթքո և իր ընկերը մնալով ձեռքերն անցած բաներով պատնէշ մը կը կանգնեն որ աստիկանութեան դէմ գնեն։ Տեղական կառավարութիւնն, Եւսուժիոյ հիւպատոսարանին հաճութեամբ 40-50 աստիկանութեան զինուոր զիւրէն է, որոց մէկ մասը նախկինով շոգենաւոր պատեր են, մէկ մասն ալ ներս մտնելով շոգենաւոր անեւակներուն դռները կտորտեր և երկու կողմէն ատրճանակի և հրացանի կուռէ մ'ունեն Սֆէթքոն մեռած և ընկերը ծանր կերպիւ վերաւորուած ձեռք անցուցեր են։ Օնուորներէն երկու հոգի վերաւոր

(1) Պատմ. Հայոց. Հատ. Ա. Գրք Գ. Գ. Լ. Բ. և ի ծանօթութեան։
(2) Ներքին Ծնորդակիւն եղբայր։

